Հավելված N 2
2025 թվականի հունվարի «15»-ին կնքված
«1032-11002/2025-ԱՏ» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություն |
| Դրամաշնորհի N | 1032-11002/2025-ԱՏ |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025-31.12.2025 |
| Ներկայացման օր | 25.12.2025 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Լիլիթ Մուրադյան, Ծրագրի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար։

1.3. Խնամքի ծառայությունների տրամադրում:
3.1.Սոցիալական աշխատողի խորհրդատվություն:
5.2. Համայնքային միջոցառումների կազմակերպում և տարեցների մասնակցության խթանում:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար։ Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը։

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրից օգտվել է 65+ տարիքի 23 շահառու, որոնցից 17-ը միայնակ տարեցներ են, 9-ը՝ հաշմանդամություն ունեցող անձինք։ Ծրագրի միջոցով նրանք հնարավորություն են ստացել պահպանել իրենց անկախությունը, ֆունկցիոնալ կարողությունները և աջակցություն գտնել այն հարցերում, որոնցում ինքնուրույն դժվարանում են։

**Իրականացված գործողություններ**

**1. Խնամքի ծառայությունների տրամադրում**
Տնայցերի միջոցով շահառուներին տրամադրվել են բազմապրոֆիլ սոցիալական ծառայություններ, ներառյալ՝

- Խնամք՝ անձնական հիգիենայի ապահովում, կերակրում,
- Աջակցություն առօրյա գործողություններում՝ մաքրություն, գնումներ, ուտեստի պատրաստում, վճարումների իրականացում և այլն,
- Առողջական վիճակի մշտադիտարկում, դեղորայքի ստացում, ընդունման վերահսկում,
- Ուղեկցում և ուղղորդում,
- Սոցիալական խորհրդատվություն՝ օժանդակ միջոցների ձեռքբերման, խնամքի հարցերում:

Ծառայություններն իրականացվել են սոցիալական աշխատողի, սոցիալական սպասարկողների և բուժքրոջ մասնակցությամբ: Սոցիալական սպասարկողները՝ գնահատված կարիքների հիման վրա, աջակցել են տան մաքրության, սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման, սնուցման, գնումների, վճարումների և ուղեկցման հարցերում: Բուժքույրը վերահսկել է ընկնելու ռիսկի բարձր ցուցանիշ ունեցող շահառուների անվտանգությունը՝ տրամադրելով խորհրդատվություն տունը անվտանգ դարձնելու վերաբերյալ, մշտադիտարկել առողջական վիճակը՝ օբյեկտիվ ցուցանիշները գրանցելով, և կազմակերպել բժշկական խորհրդատվություն և տնայցեր՝ ըստ անհրաժեշտության:

**2. Սոցիալական աշխատողի խորհրդատվություն և աջակցություն**
Շահառուները ստացել են անհատական խորհրդատվություն սոցիալական աշխատողի կողմից: Խորհրդատվությունը ներառել է օժանդակ միջոցների կարիք ունեցող շահառուներին դրանց ձեռքբերման գործընթացին աջակցելը, և երկուսին օգնել դիմելու և ստանալու գործընթացներում:

**Հավելյալ դիտարկումներ և արդյունքներ**

- Ծառայության բարելավմանն ուղղված հարցումների արդյունքում շահառուների գոհունակությունը կազմել է 90%, նրանք նշել են, որ ծրագիրն իրենց համար նոր է եղել, այն զգալիորեն նվազեցրել է միայնակության զգացումը և մեծացրել սոցիալական շփման հնարավորությունները:
- Չորրորդ եռամսյակի ընթացքում արձանագրվել է, որ տարեցների և համայնքի ընդհանուր պատկերացումները պետական խնամքի ծրագրերի վերաբերյալ բավականին սահմանափակ են: Ասոցիացիան՝ ՄՍԾ-ի հետ համագործակցությամբ, լրացրել է այս բացը՝ ամբողջ տարվա ընթացքում իրազեկելով համայնքին, հատկապես տնային խնամքի ծրագրի նպատակների, ձևաչափի մասին և ներգրավելով նոր շահառուների:

Այս կերպ, չորրորդ եռամսյակի ընթացքում ծրագրի իրականացումը ապահովել է ոչ միայն ֆունկցիոնալ և սոցիալական աջակցություն տարեցներին, այլև մեծացրել համայնքի տեղեկացվածությունը և ներգրավվածությունը ծրագրերում:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Ծրագրի վերաբերյալ հրապարակումներ չեն կատարվել:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Տարեց շահառուները ունեն բազմաշերտ առողջական խնդիրներ, և այս խնդիրները՝ միաժամանակ սոցիալական և հոգեբանական հանգամանքների հետ համակցված, դժվարացնում են տարեց անձի հետ արդյունավետ հաղորդակցումը:
Համայնքում ծրագիրը նոր էր, և խնդիր էր ներկայացնում համապատասխան փորձառու մասնագետների բացակայությունը: Ասոցիացիան մասնակիորեն լուծել է այս հարցը՝ աշխատակիցներին տրամադրելով շարունակական խորհրդատվություն, դասեր և ուղղորդումներ, ինչը նպաստել է սպասարկման որակի բարձրացմանը և թիմի հմտությունների ամրապնդմանը:
Այնուամենայնիվ, մասնագետների պատրաստումը պահանջում է ավելի խորքային և երկարաժամկետ մոտեցում: Անհրաժեշտ է ամենօրյա ռեժիմով աշխատել աշխատակիցների հմտությունների զարգացման ուղղությամբ՝ մշտական ուսուցման, պրակտիկայի և թիմային աջակցության միջոցով, որպեսզի նրանք կարողանան արդյունավետորեն արձագանքել տարեցների բազմաշերտ կարիքներին:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Կիրառելի չէ:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

Համայնքի ներսում ակտիվորեն շարունակվել է իրազեկման գործընթացը, որի նպատակն էր բարձրացնել ծրագրի տեսանելիությունը, խթանել շահառուների ներգրավումը, ճիշտ պատկերացում ձևավորել ծառայության գործառույթների մասին և ապահովել համայնքային մասնակցության շարունակականությունը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Գլխավոր քարտուղար՝ Ա. Մանգասարյան | Նախագահ՝ Ա. Թորոսյան |
| ------------------------------------------- (ստորագրություն) | Կ.Տ. |
| Կ.Տ. | |